**Արձանագրություն N 16**

**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի գնահատող հանձնաժողովի նիստի /տեխնիկական և ֆինանսական առաջարկի գնահատում/ /ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ. կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության ձեռքբերման /**

**Երկիր**

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան 26 հունիսի 2026թ.

**Ընթացակարգ**

Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի փուլ:

**Ծրագիրն իրականցնող մարմնի անվանումը**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

**Ծրագրի անվանումը**

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:

**Նիստին մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,

Հանձնաժողովի անդամներ Ա. Մարգարյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Ա. Առուշանյանը, Ա. Սերգոյանը և Մ. Բաբայանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Fichtner GmbH & Co. KG ընկերության ներկայացուցիչ ՝ Արմեն Շահնազարյանը:

**Ֆինանսական փաթեթների բացման վերաբերյալ**

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցների գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվեցին 2026 թվականի հունիսի 26-ին, ժամը՝ 11:00-ին, ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի վարչական շենքում (հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ):

Գնային առաջարկների բացման նիստում գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝

1) հրապարակեց մասնակիցների որակավորման չափանիշների և տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները՝ համաձայն գնահատման արձանագրության,
2) հայտարարեց յուրաքանչյուր մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

**Տեղեկատվություն նախահաշվային և մասնակիցների կողմից առաջարկված գների մասին**

| | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| **Չափաբաժին 1**<br>/Նախահաշվային գինը (ներառյալ ԱԱՀ)՝ 500 000 000 ՀՀ դրամ/<br>տեխնիկական աուդիտորական ծառայություններ | | | | |
| 1 | Fichtner GmbH & Co. KG | 414,474,260 | 82,174,780 | 496,649,040 |
| 2 | «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ | 415,558,554 | 83,111,711 | 498,670,265 |

**Ֆինանսական փաթեթների ուսումնասիրության մասին**

---

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյուքում արձանագրեց.

1.Fichtner GmbH & Co. KG ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ այն է գնային առաջարկում ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) հաշվարկված է սխալ (ԱԱՀ-կազմում է 20%, 414,474,260 *20%=82,894,852):

**Հանձնաժողովի որոշումը.**

1. Հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏՍ ծածկագրով հրավերի 8-րդ բաժնի 8.2 կետը (Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: **Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:**) հանձնաժողովը որոշոց Fichtner GmbH & Co. KG ընկերության կողմից ներկայացված հայտը մերժել՝ գնային առաջարկը Հրավերի պահանջներին անհամապատասխան կազմված լինելու հիմքով:

2. Ամփոփել «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ-ի գնահատման արդյունքները.

Գնահատման արդյունքում «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ-ի ֆինանսական առաջարկը գնահատվում է 20 միավոր,

| **Հայտատուներ** | **Ֆինանսական գնահատական /միավոր/** | **Տեխնիկական առաջարկ /միավոր/** |
|---|---|---|
| «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ | 20 | 75.83 |
| | **Ընկերության ընդհանուր գնահատականը (տեխնիկական և ֆինանսական)** | |
| | 95.83 | |

3. ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏՍ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ-ն,

4. Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

5. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6. Անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-7, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ______________ Տ. Քանքանյան

| | | |
|---|---|---|
| անդամներ | | Ա. Մարգարյան |
| | | Ա. Սիմոնյան |
| | | Ս. Ասրյան |
| | | Ա. Առուշանյան |
| | | Մ. Բաբայան |
| | | Ա. Սերգոյան |
| Քարտուղար | | Ա. Սարգսյան |

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի գնային առաջարկների բացման նիստի մրցույթի հայտ ներկայացրած կազմակերպության ներկայացուցիչներ

26.06.2026թ. ժ.11:00

| Հ/Հ | Մրցույթի հայտ ներկայացրած կազմակերպության անվանումը | Մասնակից ընկերության ներկայացուցիչ /անուն, ազգանում/ | ստորագրություն | Հանձնաժողովի քարտուղարի ստորագրությունը |
|---|---|---|---|---|
| 1 | «Ֆիխներ» Fichtner GmbH & Co. KG | Արմեն [illegible] | | |
| 2 | «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ, Decon International LLC | — | — | — |